ՆՈՐ-ԴԱՐ

№ 201 ՏԱՍՆԵԻՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ Ուրբաթ, 25 Նոյեմբերի 1894 Ուրբաթ, 25 Նոյեմբերի ՏԱՍՆԵԻՄԷԿԵՐՈՐԴ ՏԱՐԻ, № 201

Տարեկան 10 րուբլի, վեց ամիսը՝ 6 րուբլի, հրեք ամիսը՝ 3 ր. 50 կ. ամիսը՝ 1 ր., հատով՝ 5 կոպէկ։
բաժանորդ գրւում են Թիֆլիսում միմիայն խմբագրատանը։

Խմբագրութեան հասցէն՝ Тифлисъ. Редакція «Норъ-Даръ» կամ Tiflis. Rédaction «Nor-Dar».

Խմբագրութիւնը բաց է ամեն օր (բացի տօն օրերից) ժամը 9-ից մինչև 2-ը։ Յայտարարութիւնները ընդունւում են ամեն լեզուներով Յայտարարութիւնների գնաին 2 կ., ընկերների համար կրկնապատիկ

1895-ԻՆ
(ՏԱՍՆԵԻԵՐԿՈՒԵՐՈՐԴ ՏԱՐԻ)
ՔԱՂԱՔԱԿԱՆ-ԳՐԱԿԱՆԱԿԱՆ
ՆՈՐ-ԴԱՐ
ԱՄԵՆՕՐԵԱՅ ԹԵՐԹ Ը
Թիֆլիսում
Ը ր ի ր ատարակուի նոյն դիրքով եւ ծրագրով ամեն օր, բացի կիրակի եւ տօներին հետեւող օրերից։
(Տարուայ ընթացքում „Նոր-Դար“-ը լոյս կըտեսնի առնուազն 220—225 անգամ)

«ՆՈՐ-ԴԱՐ» Ը ՍՏԱՆՈՒՄ Է ԵՒ ՍԵՓԱԿԱՆ ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«Նոր-Դար»-ի տարեկան գինն է 10 րուբլի, վեց ամսուանը՝ 6 րուբլի, Թիֆլիսից դուրս՝ ամիսը 1 ր. 50 կ., հատով դուրսը՝ 7 կ., Թիֆլիսում՝ 5 կոպ։

ԵՒՐՈՊԱՅի, ԹԻՒՐՔԻԱՅի և այլ հեռաւոր երկրների բաժանորդները վճարում են տարեկան 40 ֆրանկ։

ԱՄԵՐԻԿԱՅի բաժանորդները վճարում են տարեկան՝ 8 դոլլար։

«Նոր-Դար»-ին բաժանորդ են գրւում իւրաքանչիւր ամսի 1-ից սկսած։

ԹԻՖԼԻՍՈՒՄ բաժանորդ են գրւում ինչպէս «ՆՈՐ-ԴԱՐ»-ի խմբագրատանը։

Խմբագրատունը գտնւում է Պուշկինսկայա փողոցում, Սկուեըի դիմաց։

Օտար քաղաքներից բաժանորդ գրուողները դիմում են խմբագրութեանը այս հասցէով՝ Тифлисъ, въ Редакцію ежедневной газеты „НОРЪ-ДАРЪ“ կամ Tiflis (Caucase) Rédaction du journal «Nor-Dar».

Խմբագիր հրատարակիչ՝ ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

Ծանօթութիւն.—Առաջիկայ 1895 թ. համար «Նոր-Դար»-ի բաժանորդագրութիւնը բացուած է։ Առաջիկայ տարուայ համար նոր բաժանորդ գրուողը ետ-ստանդարտ գինը ուղարկած օրից կսկսի ստանալ «Նոր-Դար»-ի լոյս տեսնող համարները յետ։

ԲՈՎԱՆԴԱԿՈՒԹԻՒՆ

Առաջնորդող.— Քաղաքական խորհրդածութիւններ։
Եկեղ. պատգամաւոր Կ. Պոլսից։
Քրոնիկոն.—. Հայաստանում գործուած անգթութիւններ։ Հայկական միտինգներ։ Պատգամաւորութիւն Հայերի կողմից։ Կմբերլէյի դիմումը Թուրքաց դեսպանին։ «Times» լրագրի պահանջը։ Անգլո-հայկական միութեան նախագահի խօսակցութիւնը։ Բերլինի դաշնագիրը և Ռ. Դուրը։ Վերաքննութիւն քաղ. վարկի բնկ. վարչ. գործունէութեան վրայ։ Թէյի տնկարանները Թուրքաստանում և Անգլիացիների երկրում։ Հնագիտական և պատմական Թանգարան Եկատերինոդարում։ Նպաստ Ֆանհաւի քաջ. զրոյի արհեստագիտական դասարանին։ Ախալքալաքից։
Ղզլարի գինեգործութիւնը։
Թղթակցութիւններ.—Նամակ Թիւրքիայից Կ. Պոլսոյ—Ցուցակ պատրիարքի հրաժարականի խնդիրը։
Քաղաքական.— Արեւելեան խաղաղութիւն։ Իտալիա։ Բուլղարիա։
Հեռագրներ.—
Թառն լուրեր.
Բանաստեղծական.—Կրօն և գիտութիւն։
Տեղեկատու.—
Յայտարարութիւններ.

Թիֆլիս, 24 Նոյեմբերի, 1894 Թ.

ՔԱՂԱՔԱԿԱՆ ԽՈՐՀՐԴԱԾՈՒԹԻՒՆՆԵՐ

—

Երբ երկրագնդի մի որ և է մասում քիչ թէ շատ նշանաւոր ընդհարումն է տեղի ունենում, արիւնհեղութիւն, պատերազմ կամ կոտորած է լինում, որ կարող է ազգերի ուշադրութիւնն իր վրայ դարձնել մարդասիրական կամ քաղաքական շարժառիթներով, իսկոյն հարց է դրւում. ինչպէս կըվերաբերուեն դրանք տեղի ունեցած ընդհարումներին, պատերազմին։

Չինաստանի պէս ահագին երկիրըն Ասիայի արեւելքում պատերազմում է Ճապոնիայի հետ։ Պէտք է ընդունէինք, որ այդ հեռաւոր պետութիւնների միջև տեղի ունեցող պատերազմի համար հարկ չկայ դիմելու եւրոպական մեծ պետութիւններին, բայց այսօր, որքան էլ ճապոնական զօրքերը յաղթութեամբ առաջ են գնում, դարձեալ ամենքն էլ հարցնում են. ինչ են ասում մեծ պետութիւնները, թողլ պիտի տան, որ պատերազմը շարունակուի, ճապոնացիների եռանդին վերջ չդնէ տրուի։

Այդ այդպէս լինելով, ամեն մի փոքր ինչ քաղաքական կեանքի ձգտող և այդ կեանքով ապրող ժողովուրդ, եւրոպական իւրաքանչիւր փոքրիկ, աննշան պետութիւն՝ ժողովրդական, ազգային, պետական առօրեայ կեանքում տեղի ունեցող մի որ և է փոփոխութեան ժամանակ, ընդհանուրի ուշադրութիւնը դրաւող ընդհարման դէպքում, ամենից առաջ հարցնում է թէ՝ ինչպէս կըվերաբերուեն դէպի այդ փոփոխութիւնը կամ ընդհարումը մեծ պետութիւնները, լաւ իմանալով, որ առանց դրանց հաճութեան, առանց դրանց օգնութեան կամ միջամտութեան՝ ոչ մի քիչ թէ շատ նշանաւոր ցանկալի փոփոխութիւն տեղի չի կարող ունենալ և եղածն էլ հաստատուն չէ ու չի կարող երկարաւոր լինել։

Մի օրինակ բերենք, որպէս զի հասարակ մտքին էլ հասկանալի լինի մեր ասածը։ Կարող էր, օրինակ, Սերբիան իշխանութիւնից թագաւորութեան վերածուել և Սերբիայի իշխանը՝ թագաւոր դառնալ, եթէ Աւստրիան և միւս մեծ պետութիւնները այդ բանին իրենց հաճութիւնը չյայտնէին և դէմ լինէին. ի հարկէ, այդ չէր լինիլ։

Ուստի իւրաքանչիւր փոքրիկ երկիր, աննշան պետութիւն, մեծ պետութիւններից օգուտներու համար, պէտք է լաւ ուսումնասիրէ նրանց յարաբերութիւնները, պէտք է գտնէ և նրանց բարի սրամտրութիւնից օգտուելու ժամանակը և ձեռքից բաց չթողնէ։

Այդ իսկ պատճառով փոքրիկ պետութիւններին առաջնորդող գործիչներն իրենց խնամքին յանձնուած պետութիւնների մէջ ոչինչ մի այնպիսի, ընդհանուրի ուշադրութիւնը գրաւող փոփոխութիւն չեն մացնում, մինչև որ մեծ պետութիւնների միջև եղած յարաբերութիւնները և տրամադրութիւնն իրենց գործին աջող չլինի։

Այդ առողջ և գործնական մտքի դէմ մեղանչող երկիրը կամ ժողովուրդը վնասուում է, նրա յոյսերն ի դերև են անցնում։

Այսօր աշխարհիս և ազգերի բաղդ վճռող մեծ պետութիւններն են՝ բացի Ռուսիայից,—Գերմանիան, Անգլիան, Աւստրիա-Ունգարիան, Ֆրանսիան և Իտալիան։ Երկրորդական պետութիւնների հաշուումն են՝ Թիւրքիան, Սպանիան և միւս մի քանի փոքրիկ պետութիւնները՝ ինչպէս Շուէդիան, Բելգիան, Ռումինիան, Յունաստանը, որոնք, այս կամ այն մեծ պետութիւնների դաշնակցութիւնների մէջ մտնելով, կարող են դեր խաղալ։

Ինչ վերաբերում է մեծ պետութիւններին, դրանք իրենց ոյժով, հեռւաւոր և իրենց ձայնով մէկ աստիճանի վրայ չեն կանգնած.

Պէտք է և հարկաւոր է իմանալ և այն, որ այժմս մի որ և է խնդրում մեծ պետութիւնների համերաշխ և գործնական միջամտութեան համար ամենից աւելի անյարմար ժամանակն է։

Այս լաւ տեսնում են փոքրիկ պետութիւնները։

Այսօր մեծ պետութիւնների յարաբերութիւնների մէջ փոփոխութիւններ են տեղի ունենում, նոր դաշնակցութիւններ կազմելու խօսք կայ, այնպէս որ իրենց՝ մեծ պետութիւնների համար էլ դեռ պարզ չէ իրենց յարաբերութիւնները, միմեանց հետ և բռնելիք դիրքը միջազգային խնդիրներում, ինչպէս և արտաքին քաղաքականութեան մէջ։ Դրանք ամենքն էլ իրենց ներքին գործերով են զբաղուած և սպասողական դրութեան մէջ են։

Այս դրութեան մէջ Ֆրանսիայից, օրինակ, ոչ մի փոքրիկ պետութիւն ոչինչ չէ սպասում. Ֆրանսիան երկու տասնեակ տարի է, որ արտաքին քաղաքականութեան մէջ ոչ մի գործում առաջնորդող չէ, ալ սուհետև էլ, գոնէ առայժմս, հետևողի դերն է ուզում կատարել։

Ֆրանսիան զօրք է ուղարկում Մադագասկար, զգուշութեամբ դիմում է Գերմանիային և միւս մեծ պետութիւնների նման, իւր ուշադրութիւնը դարձրած ունի չին-ճապոնական պատերազմի վրայ։

Անգլիան կարող է առաջնորդողի դեր կատարել արտաքին քաղաքական խնդիրներում, բայց նա իւր ոյժերը երևի հասկանալով և իւր աւանդական քաղաքականութեանը հետևելով, խնդիրները յարուցանում է և աշխատում միւս պետութիւններին մէջ ձգել, իսկ իրեն երկրորդ դէմ վրայ դնել։

Գերմանիան կարող է զօրեղ կերպով ու մեծ աջողութեամբ արտաքին քաղաքական խնդիրներում առաջնորդողի դերը կատարել, դրա հետ կըգնայ Աւստրիա-Ունգարիան, կամայ թէ ակամայ, և Իտալիան, իսկ աւելի մարդասիրական, ազգերի իրաւունքները պաշտպանելու խնդրում դրա հետ կըգնան և միւս փոքր պետութիւնները, բացի, ի հարկէ, այն պետութիւնից, որի դէմ ուղղուած է գործը։

Այս հանգամանքներն իմանալուց յետոյ չպէտք է մոռանալ, որ ինչպէս մասնաւոր անձերի, մասնաւոր հաստատութիւնների մէջ, նոյնպէս և պետութիւնների մէջ պատուի, հակառակութեան խընդիրները մեծ, և շատ անգամ, վճռական հետևանք են ունենում։

Այսօր մեծ պետութիւնների յարաբերութիւնները այն ընթացքն են ստացել, որ Անգլիան, առայժմս գոնէ, հեռանում է Գերմանիայից և այդպիսով այդ երկու պետութիւնների մէջ հակառակութիւն է յայտնուում։

Հետևաբար մարգարէ լինել հարկաւոր չէ, իմանալու համար, որ այն գործը, թէկուզ մարդասիրական, ազնիւ գործ լինի այդ, որի սկզբնաւորութեան պատճառը կըլինի Անգլիան, Գերմանիան կըհակառակէ ու չի օգնիլ և դրան կըհետևեն միւս յայտնի և զօրեղ պետութիւնները։

Այս ամենի եզրակացութիւնն այն է, որ փոքրիկ երկրները մեծ պետութիւնների յարաբերութիւնները պէտք է լաւ իմանան և մէկին մօտենալով, միւսին չպէտք է մոռանան ու գոյշ լինին մէկի կամ միւսի ինքնասիրութիւնը վիրաւորելուց։

—

ԵԿԵՂ. ՊԱՏԳԱՄԱՒՈՐ Կ. ՊՈԼՍԻՑ

—

ՀԵՌԱԳԻՐ «ՆՈՐ-ԴԱՐ»-ԻՆ

—

ԷՋՄԻԱՏԻՆ, 24 Նոյեմ. ժ. 4-ին, 45 ր.

Պատրիարքական իշխանութեան վերականգնման համար Վեհափառ Կաթողիկոսը հեռագրով պահանջեց Կ. Պոլսի Հայոց կրօնական խորհրդից մի պատգամաւորի առաքումն, որպէս զի այս վերջինս Թրքա-Հայաստանում եկեղեցական անյետաձգելի գործերի դրութեան մասին զեկուցումն (տեղեկութիւն) տայ ամենայն Հայոց Կաթողիկոսին։

Վեհափառ Կաթողիկոսը՝ պատգամաւորի գալուն աջակցելու համար դիմել է Կ. Պոլսի ռուսաց դեսպանին։

ՔՐՈՆԻԿՈՆ

«Հիւսիսային հեռագրական գործակալութիւնը», Լոնդոնի Նոյեմբերի 23-ից հեռագրում է մեզ հետևեալը.

«Times»-ը հաստատում է Թուրքաց գործերի Հայաստանում քրիստոնեայ բնակիչների վրայ գործած անգթութիւնների մասին տարածուած լուրերը։ Անգլիան Բ. Դրանն եռանդուն դիմումներ է արել»։

—

«Daily News»-ը հաղորդում է, որ Լոնդոնի հայերը պատգամաւոր են ուղարկել Պարիզում ապրող հայերին, որ պիտի հրաւիրէ նրանց մասնակցելու Լոնդոնում և Էդինբուրգում տեղի ունենալիք հայկական միտինգներին, ուր պէտք է խորհրդակցեն Հայաստանի գործերի մասին։

—

Անգլիական մինիստր-նախագահ Ռոզբերին, «Նովոստի»-ի ասելով, հայերի կողմից մի պատգամաւորութիւն պիտի ընդունի հայկական խնդրին վերաբերեալ։

—

«Daily News»-ը հաւատացնում է, որ անգլիական արտաքին գործերի մինիստր լորդ Կիմբերլէյը դիմել է Լոնդոնի Թուրքաց դեսպանին յայտարարելով նրան, որ անհրաժեշտ է մի կարգեր կառավարութիւն սահմանել Թրքա-Հայաստանում։

—

«Times»-ը պահանջում է, որ պետութիւնները բողոքեն Թուրքիոյ՝ Հայաստանում գործած գազանութիւնների դէմ, եթէ Բ. Դուռն անտարբեր գտնուի դէպի պետութիւնների նախազգուշացումը, այն ժամանակ յանձնախումբ պէտք է ուղարկուի Հայաստան, ինչպէս այդպիսի յանձնախումբ

ԴՈՒՐՍԸ ՎԱՂՎԱ ՀԱՄԱՐ

Ըստ ամերիկյան հեռագրերի՝ Վաղվա համար նշանակված է եղել Ֆիլադելֆիայի մեծ մրցավազքը, որի համար մեծ պատրաստություններ էին տեսնվում։ Ամերիկացիները, որոնք սիրում են ամեն տեսակ մրցավազքեր, ուզում էին տեսնել, թե ինչպես կանցնի ֆրանսիական ձիու մրցավազքը ամերիկյան ձիերի հետ։ Ֆրանսիական ձիերը, որոնք ուղարկված էին Ամերիկա, ամենալավ ձիերն էին, որոնք միայն կարող էին գտնվել Ֆրանսիայում։ Ամերիկացիները, որոնք ամեն բանում ուզում են առաջ անցնել, ուզում էին ցույց տալ, որ իրենց ձիերը ավելի լավ են, քան ֆրանսիականները։ Ֆրանսիացիները, որոնք ամեն բանում ուզում են առաջ անցնել, ուզում էին ցույց տալ, որ իրենց ձիերը ավելի լավ են, քան ամերիկյանները

ՀԱՅԿԱԿԱՆ ՀԱՐՑ

(«Ռուս-Հայ»-ի հրատարակություն)

ՀԱՐՑԱՐԱՆ ՀԱՐՑԵՐՈՎ ՀԱՅԿԱԿԱՆ ԶՈՐՔԵՐԻ ՎԱՃԱՌՔԻ ՄԱՍԻՆ

Ա. ՊՈԼԻՍ, 15 Նոյեմբերի.— Ղ-

ՀԱՐՑ

Ի՞նչ է պատճառը, որ հայկական զորքերի վաճառքը այնքան դանդաղ է ընթանում, որ մինչև այսօր ոչ մի հայկական զորք չի վաճառվել։ Ինչո՞ւ հայկական զորքերի վաճառքը ենթարկվում է այնպիսի դանդաղ ընթացքի, որ ոչ միայն հայ հասարակությունը, այլև ամբողջ Եվրոպան սկսում է կասկածանքով նայել այդ գործողության վրա

տալով հաշտութիւն առաջարկել ձապոնիային։

Պահպանողական «Standard»-ը ԹերԹը եւրոպական պետութիւնների՝ ասելեաւ պատերազմին միջամտելու վայրկեանը հասած համարելով ասում է.

«Ձապոնիան այնպիսի պատերազմական տուգանք չպէտք է պահանջէ Չինաստանից, որը բոլորովին ջլատէ նրա ուժերը քաղաքական յարաբերութիւնների նկատմամբ և ոչնչացնէ նրա վաճառականութիւնն ամբողջ հէս դար ժամանակով։ Ընդհանուր խաղաղութեան տեսակէտից լուրջ կարեւորութիւն ունեցող այդ հանգամանքներում, հարկաւոր է, որ հեռաւոր Արեւելքում մեծամեծ շահեր ունեցող ազգերը—Անգլիան և Ռուսիան առաւել ևս մտերմանալով համերաշխ կերպով գործեն. նրանց համաձայնութիւնը դիւրաւ կարող է վերջ տալ պատերազմի չարունակութեան. բաւական է որ երկու պետութիւնները միասին դիմեն Ճապոնական կառավարութեան իւր տարած յաղթութեամբ չափաւոր կերպով օգտուելու առաջարկութեամբ. Նա արդէն անկարող կլինի մերժման որ և իցէ ցոյց անելու»։

Ցիշեալ լրագրի այդ յօդուածից յետոյ անգլիական «Central News» ԹերԹի մէջ լոյս տեսաւ մի ուրիշ յօդուած, որ նոյնպէս ունեցաւ իւր ազդեցութիւնը անգլիական բարձր շրջանների վրայ։ Այդ յօդուածում այս կերպով է խօսւում չին.ճապոնական խաղաղութեան վերաբերմամբ.

«Արեւուր նաւահանգստի գրաւումով Չինաստանին հասած մեծ հարուածը՝ դեռ բոլորովին էլ հնարաւոր չի կացուցանում չարունակուող պատերազմի վերջացնելը։

«Եւրոպական պետութիւնների ներկայացուցիչները շատ անգամ խորհուրդ են տուել չինական կայսրութեան, որ նա հաշտութիւն առաջարկէ Ճապոնիային. Նոյնը կրկնուած է նաև Լոնդոնի, Պետերբուրգի և ուրիշ մայրաքաղաքների չինական ներկայացուցիչներին, սակայն մինչև ցարդ արդիւնքն եղել է ոչինչ. Եթէ Չինաստանը կամենում է այդ կորստաբեր պատերազմից և նրա աւերիչ հետեւանքներից ազատուել՝ հաշտութեամբ տխուր վախտերի Ճնշարտութեան հետ, պէտք է անմիջապէս հաշտութիւն առաջարկէ Ճապոնիային։ Իսկ վերջինս բոլորովին ցանկութիւն չունենալով չինական կայսրութեան ներքին գործերին միջամտելու և կամ անիրագործելի պայմաններ առաջարկելու, ցանկացած հաշտութեան այն ժամանակ միայն կարևորութիւն կըտայ, երբ բանակցութիւնները կըկատարուեն վստահելի մարմինների կամ անձնաւորութիւնների միջոցաւ և Չինաստանն այդ խնդրուած խաղաղութեան նկատմամբ իւր պատրաստակամութիւնները կատարելու մասին կըներկայացնի նեւթական ապահովութիւն»։

—

ԻՏԱԼԻԱ. — Չինովայից եւրոպական ԹերԹերին հաղորդում են, որ Իտալիայի Ռուտ քաղաքի բնակիչների մէջ այս օրերս յուզումներ են առաջ եկել՝ պետական մաքսային տուրքերի պատճառով՝ տեղական քաղաքային վարչութեան դէմ։ Այդ ցոյցերի ժամանակ ամբոխը քարուքանդ է արել մաքսային երեք պահակատուն։ Խռովութեան մասնակցելիս են եղել 500 հոգուց աւելի, որի ժամանակ, սակայն, ոստիկանութիւնը դիմած չէ խիստ միջոցների. Հերքակալուած է մարդ, բայց կարճ ժամանակի մէջ ոստիկանութեան յաջողած է կարգը վերականգնել։

Այդ տեսակ խռովութիւններ տեղի են ունեցել նաև Աքսար քաղաքում, սիևնոյն հարկերի սաստկութեան պատճառով։ Այդ ցոյցերին ևս մասնակցելիս են եղել 600 հոգի, ի Թիւս որոնց և կանայք։ Կարգապահութիւնը վերահաստատելու համար հարկ է եղած զօրքի միջամտութեանը. վիրաւորուած են միայն երկու ոստիկան։

—Պրոֆիլեսոր Ֆերրին 2½ տարով աքսոր է ուղարկուած, սոցիալական կուսակցութեան գործերի մէջ ունեցած մասնակցութեան համար։

—

ԲՈՒԼՂԱՐԻԱ.—Սոֆիայից քաշուած մի հեռագիր հաղորդում է, որ Սոֆիայի հախորգ կառավարիչ Շուկանովը յարձակուած է կրած անյայտ անձերի կողմից։ Կառավարիչը ծանր կերպով վիրաւորուած է, և Ստամբուլովի ուրիչ կողմնակիցներն ևս ստացած են բռնաւանական նամակներ։

ԽԱՌՆ ԼՈՒՐԵՐ

18 տարեկան նաճնուսոր մաթեմատիկոս.— Ֆրանսիայում մաթեմատիկական գիտութեան մի նոր աստղ է յայտնուել՝ Պոլ Վերնիէ, 18 տարեկան պատանի։ Այդ տղան մաթեմատիկական այնպիսի արտակարգ չնորհք է ցոյց տուել, որ ժողովրդական լուսաւորութեան մինիստրը կարգադրել է նրան ընդունել Ecole Normale գպրոց բարձր մաթեմատիկայի բաժանմունքը առանց քննութեան։ Այսօր դեռ չեղած բան է։ Ի հարկէ Պոլ Վերնիէն մեր մի հզօր գպրոցում մի ժամանակ երբեմն մաթեմատիկական աստղ հռչակուած պատանու նմանը չի լինել, որ այժմս զբաղուած է ամեն տեսակ մուժ գործերով, պատում է գիւղերը «եւրակատութեան» համար կամ վարձով պարտաւորւում է գիւղական հասարակութիւնների մէջ խռովութիւններ սերմանելու։

—

Պրոֆ. Լայպնի չարձրը Բերլինի նոր դէպքի մասին.—Մօտ օրերս պրոֆ. Լայդրնը կարգացել է մի դասախոսութիւն, որի մէջ յայտնել է իւր կարծիքները դիֆտերիտը բժշկելու համար Բերլինգի գտած դեղի վերաբերմամբ։ Նա ներկայացրել է մի աղջիկ, որը դիֆտերիտից բժշկուած էր Բերլինգի եղանակով։ Աղջիկայ կատարեալ առողջութիւն գտնելը առանց հաստատապէս այդ եղանակին վերագրելու Լայդրը չի կասկածում Թէ Բերլինգի դիֆտերիտը բժշկելու գտած եղանակը—արեան չինուկի ներգործութիւնը այդ հիւանդութեան վրայ՝ Ճիշտ է։

—

Մահուան ըաշտը.—Մօտ օրերս տեղի ունեցաւ Փրանսիական «Fifaro» ԹերԹի խմբագրապետի՝ Մանիերի Թաղումը, ուր ներկայ են եղել քաղաքական, գրականական և այլ ասպարէզների բազմաթիւ ներկայացուցիչներ։ Գերեզմանի վրայ Ճառ է խօսել Կարէխի Ակադեմականը, իրբև «Fifaro»-ի Նախկին աշխատակից, Ֆրանսուա Կոպէն, իրբև Մանիերի անձնական մօտ բարեկամը և ուրիշ մի քանի նշանաւոր անձեր։ Թաղումը կատարուած է շատ չքեղ կերպով և բազմաթիւ պատկերներ զարդարում են եղել հանգուցեալի դագաղը։

ՀԵՌԱԳԻՐՆԵՐ

«ՆՈՐ-ԴԱՐ»-Ի
ՀԻՒՍԻՍԱՑԻՆ ԳՈՐԾԱԿԱԼՈՒԹԻՒՆԻՑ

—

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 23 նոյեմբերի.— Երէկ Թագաւոր Կայսրը և Թագուհի Կայսրուհի Ալէքսանդրա Ֆէօդորովնան ուղևորուեցին Ցարսկոյէ Սելօ, ուր կանցկացնեն մի քանի օր,

Հրատարակուած է ներքին գործերի մինիստրի մի շրջաբերական որի Թուի սեպտեմբերի 3-ից, ընդ № 24, որ գրուած է մինիստրների խորհրդի ս. սինոդի աւագ-քարտուղարի նախօրօք համաձայնութեամբ կայացրած և 1894 Թուի յուլիսի 4-ին Բարձրագոյն հաստատուած կանոնադրութեան հիման վրայ և որով շտունդի աղանդը ամենավնասակար աղանդներից մէկն է յայտարարուած եկեղեցական ու պետական տեսակէտներից՝ արգելելով շտունդիստների հասարակական աղօթատուն-ժողովարանները հիմնելը։

Պետերբուրգի բորսան։ Կալուածական բանկերի գրաւաԹղԹերը. Թիֆլիսինը՝ 6%—101 գն., 5%—99 վաճ., ՔուԹայիսինը՝ 6%—101 գն., 5%—99½ վաճ.։

ԼՈՆԴՈՆ.—Չինաստանը ձապոնիային առաջարկել է վճարել պատերազմական այնքան ծախք, որքան կորոշեն Չինաստանի հետ դաշնագրեր ունեցող պետութիւնները, այն էլ 4½% ոսկու փոխառութեան ձեով և մաքսային գրաւ չդրած եկամուտների ապահովութեամբ։

Չինական ծառայութեան մէջ գտնուող Գեննեկէնն աշխատում է հարիւր հազարաւոր զօրք կազմակերպել որին առաջնորդ էին եւրոպացի սպաներ. շատ սպաներ, մանաւանդ գերմանացիները են ընդունուած չինական ծառայութեան մէջ։

ՊԵՏԵՐԲՈՒՐԳ, 24 նոյեմբերի.— Այս օրերս պետական խորհուրդը քննելու է Սև-ծով-Դանուբի նաւադնոյութեան կանոնադրութեան փոփոխութիւնը։

Նովգորոդի երկաթուղու ընկերութիւնը խնդրամատոյց է լինում երկաթուղի շինելու դէպի Վիտեբսկ և այժմեան նեղ երկաթուղին լայն երկաթուղու վերածելու։ Վոլգան Սև-ծովի նաւահանգստների հետ միացնելու համար ծրագիր է կազմուած երկաթուղի շինելու Ցարիցինից մինչև Տիխորեցկայա։

Խմբագիր—հրատարակիչ՝
ՍՊԱՆԴԱՐ ՍՊԱՆԴԱՐԵԱՆ

ՅԱՅՏԱՐԱՐՈՒԹԻՒՆՆԵՐ

Մինչև դեկտեմբերի 20-ը չոյս կըտեսնի

ԱՇՈՏ ԵՐԿԱԹ

պատմական վէպի էջերից հատորը

Երկու հատորի դինը մէկ րուբլի. իսկ դեկտեմբերի 20 ից յետոյ 1 ր. 50 կոպ. դիմել՝ Կենդրոնական գրավաճառանոցի կամ հեղինակին՝ Тифлисъ, Эчміадзинская улица №20 Баграту Айвазянцу.

10—1

„ԹԱՏՐՈՆ“

ԳՐԱԿԱՆ ԵՒ ԹԱՏԵՐԱԿԱՆ

ՀԱՆԴԷՍ

(Երկրորդ տարի)

ԲԱՑՈՒՄԱԾ Է 1895 ԹՈՒԱԿԱՆԻ ԲԱԺԱՆՈՐԱԴՐՈՒԹԻՒՆԸ։

Տարեկան բաժանորդագինն է Թիֆլիսում 3 ռ. օպերաթաշախումների համար 3 ր. 30 կ. պրոգահման՝ 10 ֆրանկ։

Թիֆլիսում բաժանորդագրը. ընդունւում է հրատարակչի մօտ Սառը ընտիտաւի փողոց, եղբ. Ռօսինեանների տուն։

Օպերաթաշախումների գնով է պրեմ. ТИФЛИСЪ, АЛЕКСАНДРУ ТАРХАНЬЯНЪ, կամ Tiflis Alexandre Tarkhanian.

Հրատարակիչ՝ ԱՂԷՔՍ. ԹԱՐԽԱՆՅԱՆ

5—2

ՈՒՍՈՒՄՆԱՐԱՆ ԵՒ ՊԱՆՍԻՕՆ
ՏԷՐ-ՅԱԿՈԲԵԱՆՑ
Ընդունում է երեւեկ, կիսագիշերօթիկ և գիշերօթիկ աշակերտներ. Սոլոլակ, Գանովսկայեա փողոց տուն № 11.
(658) 10—4.

ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐԻ ՄԱԳԱԶԻՆ
Ա. ԿՈՊՊ Մ. Խոջայենցեան փողոց, 132

Մեծ քանակութեամբ ՆՈՐ ԴԱՇՆԱՄՈՒՐՆԵՐ 350-ից մինչև 550 րուբլի
(314) 24—16.

Торговый домъ
М. А. НОВИКОВЪ и П. И. ВОЛКОВЪ
въ Москвѣ.
Оптовый складъ и контора—Черкасскій пер., д. Хаджиконста
ПРОДАЖА
шелка, бумаги, аграманта, бахромы, лентъ, кружевъ, пуговицъ, чулокъ, перчатокъ, корсетовъ, вѣеровъ и модно-галантерейныхъ товаровъ заграничныхъ и рускихъ фабрикъ
ПРІЕМЪ ЗАКАЗОВЪ
на мебелные и драпировочные приборы.
(271) 25—20.

ԻՄ ԱՇԽԱՏՈՒԹԻՒՆՆԵՐԸ

		Ռ.	Կ.
1.	«Սօս և Վարդիթեր» վէպ (երկրորդ տիպ)	1	50
2.	«Աղասի» թատերագրութիւն (սպառուած)	—	—
3.	Երկու խօսք Համքարի մասին» թարգմ. (սպառուած)	—	—
4.	«Ներքին կեանք Հին Հայաստանի» թարգ. (սպառուած)	—	—
5.	Ղարաբաղի տիրամայր Մարիամեան աղջկանց դպրոցի բացումը (սպառուած)	—	—
6.	Ագուլեաց երկու դպրոցի բացումը (սպառուած)	—	—
7.	«Կռուածապիկ» վէպ (սպառուած)	—	—
8.	«Հայի խնդիր (սակաւաթիւ)	1	
9.	«Շահէն» վէպ	1	
10.	«Յեցեր» վէպ	1	
11.	«Բզդէ» պէպ	1	20
12.	«Սկիզբն երկանց» վէպ	1	20
13.	Յուշիկներ» Ա. շրջան	1	

Բոլոր իմ աշխատութիւններս բացի «Սօս և Վարդիթերից վաճառւում են բացառապէս ի Ձմօտ։
Հասցէ՝ Թիֆլիս Ներսիսեան դպրանոց։
Գումարով առնողներին 20% զիջումն կըլինի։
Ձանազարհածախքն առնողի վրայ։
ՊԵՐՃ ՊՈՕՇԵԱՆՑ
30—14

ԿԵՆԴՔԻ ԱՊԱՀՈՎՈՒԹԻՒՆ
ՓՐԱՆՍԻԱԿԱՆ ԸՆԿԵՐՈՒԹԻՒՆ
Պետերբուրգ Նեւսկի պր. № 3
Ռուսիայում ընդերութիւնը Բարձրագոյն Հոչակութիւն է ստացել 1889 թ. յունիսի 2-ին։
Ընկերութեան գործունէութեան վրայ կառավարչական մշտական իրական հսկողութիւն է նշանակուած. ՈՒՐՐԵՆ ընկերութիւնը 1890 թուին Ֆրանսիայում և Ներպայի մէջ 50,000,000 ֆրանկի ապահովութիւն է արել։
ՕԳՈՒՏԻՆ
Օգուտին մասնակցելու վճարէն «Ուրբեն» ընկերութիւնը ոչ մի ընթացիկ պրեմիա չէ վերցնում կեանքըն ապահովուողի հիւանդութեան դեպքում և, որ չնայելով նրան Պոլիսը պահում է իւր ոյժը.
Գլխաւոր ներկայացուցիչ, Անդրկովկասի, Անդրկասպեան և Թուրքիստանի երկրների նոյնպէս և Բուխարայի համար է Պալակ և Ընկ. առևտրական տունը Թիֆլիսում, Վերիամինովսկայա փողոց տուն № 10, III դիմացինների հանդէպ. Գլխաւոր վերատեսչին ՄԻԽԱՑԻԼ ՕՍԻՊՈՎԻՉ ՉԵԺԻԿԸ կանոնադրութիւնը և պահպան բացատրութիւններ կարելի է ստանալ Բաթումում, Բագուում, Սուխարպանդում—Պալակ և Ընկ.ի գրասենեակներում և ընկերութեան բոլոր գործակալութիւններից։
30—11.

Дозволено цензурою. Тифлисъ 24-го Ноября 1894

Տպարան Ա. Ի. Պետրովի ТипографіяА. И. Петрова Гол. пр. домъ Читахова